մուած են վիշապների նկարները։ Նկարները համաչափ են երկու կողմերում եւ համաչափութիւնը ամէն տեղ պահպանուած է։ Դաղաղ-կարասի մէջ ինչ որ խոնաւութիւն է առաջացել եւ տեղ-տեղ գոտին փտել էր։ Այդ կտորները (11 հատ) իրար քով շարելով՝ վերակազմութեան ուրուագիծը տուի նը-կարչին։

Նոյնանման մի գոտի գտնուած էր Ուրմիա լճի հարաւ-արեւելեան կողմը, երկու եղի բրոնզի արձանների հետ, Ղուշչի գեղում (Տես Ազգագրական Հանդէս 1913, Ա. գիրք, էջ 121. Ատրպետ, Եղի պաշտամունքը)։ Ղուլիջանում գտնուած գոտին մասամբ նման լինելով Ղուշչիի գոտուն, ես դաղափար կազմեցի թէ դա անպատճառ Վիշապազանց որեւէ մոգի կամ քուրմի գոտի է։ Ենթադրութիւնս աւելի ուժեղացաւ, երբ քննեցի եւ նկատեցի, որ Ղուլիջանի մօտից անցնում է Արագածից իջած եւ Ապարանով դէպի Աշտարակ ուղղուած ջրանցքը, որի պաշտօնեան կամ ջրաբաշխը՝ ջրպետը երեւի եղել է այդ քրմապետը, որ բնակավայր ունեցել է Ղուլիջանում։ Ղուլիջանի մօտ ապառաժի վրայ քանդակուած սեպաձեւ արձանագրութիւնը ցոյց է տալիս, ինչպէս բացատրում է Նիկոլսկին, որ այդ քաղաք-բերդը գոյութիւն է ունեցել ուրարտական իշխանութեան շրջանում։